«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂԻ
ՀԱՅՐԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ »
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

հասցե՝ գ. Ձորագյուղ
ինդեքս՝ 1412
հեռ. 093-4631-78
mail-dzoragyugh1@schools.am

N355 *22.08.2023թ.*

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ

Տեղեկացնում եմ Ձեզ, որ << Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի Հ.Ղազարյանի անվան հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի ներքոնշյալ աշխատակիցները 2023 թվականի օգոստոսի 22-ից ՀՀ ԱՕ 113-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի 112-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի հիմքերով և հանրակրթության մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով տնօրենի՝ 22.08.2023 թվականի հրամաններով ազատվել են աշխատանքից:

1.Մուրադյան Քրիստինե--<<Ռուսաց լեզու>> առարկայի ուսուցիչ՝ շաբաթական 22 դասաժամ
2. Մնացականյան Սոնա <<Դասվար>> շաբաթական 18 դասաժամ
3. Ֆահրադյան Սվետլանա <<Դասվար>> շաբաթական 18 դասաժամ:
4. Գասպարյան Ռուզաննա <<Դասվար>> շաբաթական 18 դասաժամ:
5. Մկրտչյան Ռամելա <<Դասվար>> շաբաթական 18 դասաժամ:
6. Հարությունյան Ցուրիկ <<Շախմատ>> առարկայի ուսուցիչ շաբաթական 11 դասաժամ:
7. <<Հայոց պատմություն>> առարկա 8 դասաժամ:

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի թիվ 396-Ն հրամանով հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի>> 9-րդ կետի պահանջներով՝ հայտնում եմ Ձեզ , որ <<Ռուսաց լեզու>>, <<Հայոց պատմություն>> ,<<Շախմատ>> առարկաների ուսուցչի և չորս <<Դասվար>>-ի թափուր տեղերը զբաղեցնելու համար հայտարարվել է մրցույթ, որը տեղի կունենա 2023 թվականի սեպտեմբերի 11 –ին ժամը 14:00-ին:
Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ / Է. Աբրահամյան /

Հայտարարություն

Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Զորագյուղի Հ. Ղազարյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Ռուսաց լեզու (22 դասաժամ), Հայոց պատմություն (8 դասաժամ), Շախմատ (11դասաժամ), <<Դասվար>>- 72 դասաժամ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի օգոստոսի 23-ից մինչև սեպտեմբերի 5 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ. սեպտեմբերի 11- ին՝ ժամը 14:00-ին, Զորագյուղի Հ. Ղազարյանի անվան հիմնական դպրոցում, հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Զորագյուղ, 12-րդ փ.շ.26: Տեղեկությունների համար զանգահարել (094) 46-31- 91 հեռախոսահամարով: